**Հավելված 2**
**Քաջարան համայնքի ավագանու**
**27.04.2020թ. №23-Ա որոշման**

## ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | **ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ/ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ** |
| Մարզ | **ՍՅՈՒՆԻՔ** |
| **Համայնքը/բնակավայրը** | **Քաջարան**<br>ք.Քաջարան, Լեռնաձոր, Քաջարանց, Գեղի, Նոր Աստղաբերդ |
| **Համայնքի/բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | ք. Քաջարան 330 կմ / 25կմ<br>Լեռնաձոր 325 կմ / 21 կմ<br>Քաջարանց 333 կմ / 28 կմ<br>Նոր Աստղաբերդ 334 կմ / 29 կմ<br>Գեղի 332 կմ / 27 կմ |
| **Համայնքի/բնակավայրի բնակչությունը** | Համայնք՝ 8300<br>ք. Քաջարան՝ 7100,<br>Լեռնաձոր՝ 740, Քաջարանց՝ 220, Գեղի՝ 130, Նոր Աստղաբերդ 110 |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք/բնակավայր** | Սահմանամերձ<br>Բարձր լեռնային |
| **Համայնքի/բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն** | **Քաջարան**<br>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը համայնքային սեփականություն են: Ջրամատակարարման արտաքին ցանցի երկարությունը՝ 13կմ, ներքին ցանցինը՝ 18կմ: Վիճակը՝ բավարար: Ջրամատակարարումը՝ շուրջօրյա:<br>Քաղաքը գազաֆիկացված է: Բնակարանների 90%-ը միացված են համակարգին: Ցանցի վիճակը՝ լավ:<br>Էլեկտրական ցածրավոլտ բաշխիչ ցանցի վիճակը՝ բավարար:<br>Քաղաքը ոռոգման միասնական համակարգ չունի:<br>Քաղաքի բոլոր փողոցները լուսավորության համակարգեր ունեն: Լուսավորվածության աստիճանը՝ լավ: Լուսատուների 95%-ը լուսադիոդային են: 2020թ. մնացած բարձր ճնշումային լուսատուները ևս կփոխարինվեն լուսադիոդայինով:<br>**Լեռնաձոր**<br>Հեռավորությունը համայնքային կենտրոնից՝ 5 կմ: Գազաֆիկացված է: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգը ապահովում է անհրաժեշտի 80% -ը: Փողոցների լուսավորվածությունը՝ 50%: Այլ ծրագրերով 2020-21թթ նոր լուսավորության համակարգ կկառուցվի: Կենտրոնացված ոռոգման համակարգ չունի: Ոռոգումը իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>**Գեղի**<br>Հեռավորությունը համայնքային կենտրոնից՝ 25 կմ: Գազաֆիկացված չէ: Խմելու ջրամատակարարման համակարգով ապահովված է: Փողոցների լուսավորվածությունը՝ 50 %: Կենտրոնացված ոռոգման համակարգ չունի: Ոռոգումը իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>**Նոր Աստղաբերդ**<br>Նոր Աստղաբերդ վարչական շրջանի Գետիշեն գյուղի հեռավորությունը համայնքանին կենտրոնից՝ 27 կմ: Գյուղը գազաֆիկացված չէ: Խմելու ջրամատակարարման համակարգ ունի, որը սպասարկվում է համայնքապետարանի կողմից: Ոռոգման կենտրոնացված համակարգ չունի: Ոռոգում իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>Փողոցային լուսավորության համակարգի կառուցումը սկսվել է, կավարտվի 2020թ –ին: |

| | |
|---|---|
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը** | **Ծրագրի նպատակն է՝ ապահովել նպաստավոր, հարմարավետ և անվտանգ ապրելու միջավայր համայնքի բնակիչների և բիզնես գործունեության համար**<br><br>**<u>Նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները</u>**<br>➢ **<u>համայնքի բնակավայրերի 5,5_կմ երկարությամբ 10 փողոցների հիմնանորոգում և բարեկարգում, 1,4 կմ երկարությամբ մայթերի կառուցում</u>**<br>➢ **<u>ներհամայնքային 1,0 կմ_ճանապարհների հիմնանորոգում և բարեկարգում</u>**<br><br>**1. Քաջարան քաղաքի Շիրվանզադե փողոցի հմնանորոգման աշխատանքներ**<br>➢ Փողոցը վերջին անգամ մասնակի (փոսային) վերանորոգման է ենթարկվել 1995թ.-ին:<br>➢ Տաքսի ծառայությունները հրաժարվում են սպասարկել փողոցի բնակիչներին՝ իրավացիորեն պատճառաբանելով փողոցի դժվար անցանելիությամբ:<br>➢ Փողոցում տեղադրված երեք աղբահարթակներից աղբի բարձումն ու տեղափոխումը մեծ դժվարությամբ է իրականացվում, հատկապես՝ ձմռան ամիսներին:<br>➢ Քանդված ասֆալտբետոնե ծածկն ու մայթերը, ջրահեռացման համակարգի բացակայությունը հավելյալ վտանգներ, անհարմարություններ են ստեղծում մեքենաների, հետիոտնի երթևեկության համար, խաթարում բիզնես միջավայրը:<br>**2. Քաջարան քաղաքի Չարենց փողոցի հիմնանորոգում**<br>➢ Փողոցը վերջին 20 տարում չի վերանորոգվել:<br>➢ Խմելու ջրագծի վթարների պատճառով փողոցը տեղ՛տեղ անացանելի է դարձել:<br>➢ Փողոցում գտնվող մարզահրապարակի և մանկապարտեզի այցելուների համար անհարմարություններ են ստեղծվել՝ բացասաբար ազդելով դրանց գործունեության արդյունավետության վրա:<br>**3. Քաջարան քաղաքի Շահումյան փողոցի հիմնանորոգում**<br>➢ 1986թ. բազմահարկ բնակելի շենքերի շահագործման հանձնելուց հետո դեպի այդ շենքեր տանող ճանապարհը չի վերանորոգվել:<br>➢ Փողոցը քաղաքի բնակելի կառուցապատված հատվածը արդյունաբերական տարածքի հետ միացնող երրորդ ուղին է. քաղաքի կենտրոնը կապում է հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրական տարածքի հետ: Այս առումով փողոցը ծանրաբեռնված է:<br>➢ Փողոցի ասֆալտի պատվածքի մեծ մասը ընդհանրապես քայքայված է և միջավայրը փոշով աղտոտման լրացուցիչ աղբյուր է հանդիսանում:<br>**4. Քաջարան քաղաքի Բակունց փողոցի հիմնանորոգում**<br>➢ Այս փողոցում 2019թ. սուբվենցիոն ծրագրով համայնքի ամենամեծ բազմաֆունկցիոնալ ու ներառական մարզահրապարակն է կառուցվում: Փողոցի հիմնանորոգմամբ կամբողջացվի քաղաքային միջավայրի բարելավման տրամաբանությունը,անվտանգ ու հարմարավետ երթևեկություն կապահովվի մարզահրապարակի այցելուների համար:<br>➢ Փողոցի վրա է գտնվում նաև բժշկական կենտրոնը, և շտապ օգնության մեքենաների երթևեկության անվտանգությունը այս միջոցառմամբ էապես կբարելավվի:<br>**5. Քաջարան քաղաքի Լեռնագործներ փողոցի հիմնանորոգում**<br>➢ Քաղաքի կենտրոնական և ամենամեծ փողոցն է և առանց այդ փողոցի հիմնանորոգման մյուս փողոցների հիմնանորոգումը չի կարող ապահովել անհրաժեշտ արդյունք:<br>➢ Այս փողոցի վրա են գտնվում ոչ միայն համայնքի բնակիչների, այլև հյուրերի համար անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ բանկեր, փոստ, մշակույթի պալատ, համայնքապետարան, հյուրանոց:<br>➢ Համաքաղաքային բոլոր միջոցառումները այս փողոցում են իրականացվում՝ մեծության և դիրքի հարմարության պատճառով: |

| | |
|---|---|
| | ➢ Փողոցի ասֆալտի պատվածքի մեծ մասը ընդհանրապես քայքայված է և միջավայրը փոշով աղտոտման, ինչպես նաև երթևեկության ռիսկերի լրացուցիչ աղբյուր է հանդիսանում:<br>**6. Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի, Գետափնյա - Լեռնագործներ անցուղու հիմնանորոգում**<br>➢ Փողոցը է քաղաքի բնակելի և արդյունաբերական հատվածները իրար հետ կապող հիմնական ուղին է:<br>➢ Խիստ ծանրաբեռնված է ինտենսիվ երթևեկությամբ, հատկապես արտադրական նշանակության խոշոր ու ծանրաքաշ տրանսպորտային միջոցներով:<br>➢ Փողոցը խաչվում է Մ2 Հայաստան-Իրան մայրուղու և Քաջարանց գյուղ տանող ճանապարհի հետ:<br>➢ Քաղաքի ամենափոշոտված փողոցն է. միջավայրը անընդհատ և ինտենսիվ կերպով աղտոտվում է փոշով՝ անհարմարություններ և առողջական ռիսկեր ստեղծելով ոչ միայն փողոցի բնակիչների, այլև փողոցի վրա գտնվող արվեստի դպրոցի և №2 միջնակարգ դպրոցի, մարզահամալիրի սաների ու աշխատակիցների համար:<br>➢ Գետափնյա - Լեռնագործներ անցուղին Գետափնյա փողոցն ու Մ2 Հայաստան-Իրան մայրուղին կապում է քաղաքի կենտրոնական՝ Լեռնագործներ փողոցի հետ: Քաղաքի երթևեկության 90%-ը այս անցուղով է կատարվում և դրանից ամենօրյա ռեժիմով օգտվում են քաղաքի բոլոր բնակիչները:<br>**7. Ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգում Քաջարանց գյուղում**<br>➢ Սկսվում է գյուղի մուտքից և ձգվում գյուղի ամբողջ երկայնքով:<br>➢ Տրամաբանական շարունակությունն է հանդիսանում 2019թ. գյուղում իրականացված սուբվենցիոն ծրագրի: Այն էականորեն կբարձրացնի իրականացվածի նշանակությունն ու արդյունավետությունը:<br>➢ Բնակչության թվով համայնքի երկրորդ գյուղական բնակավայրն է:<br>➢ Փողոցը քաղաքը համայնքի խմելաջրի մաքրման կայանի հետ կապող պահեստային ճանապարհ է հանդիսանում:<br>**8. Փողոցների հիմնանորոգում և մայթերի կառուցում Լեռնաձոր գյուղում**<br>➢ 2019թ. սուբվենցիոն ծրագրով գյուղում երկու փողոց է հիմնանորոգվել: Այս հայտով նախատեսվում է հիմնանորոգել այդ երկու փողոցները իրար հետ կապող փողոց: Այս միջոցառումը կնպաստի արդեն իսկ հիմնանորոգված փողոցների շահագործման արդյունավետությունն ու տևողությունը:<br>➢ Վերակառուցման ենթակա մայթը ձգվում է Մ2 մայրուղու երկայնքով և միացնում է գյուղի երեք թաղամասերը: Այս երթուղով են գյուղի երեխաները քայլում դպի դպրոց ու մանկապարտեզ: Մայրուղով տեղի ունեցող ինտենսիվ երթևեկությունը մեծ ռիսկեր է առաջացնում հետիոտնի համար: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | 1. Ասֆալտապատված և մեքենաների համար բարելավված փողոցի երթևեկելի մաս:<br>2. Մայթ՝ հետիոտնի անվտանգ և հարմարավետ երթևեկի համար:<br>3. Բարելավված քաղաքային միջավայր բնակիչների և գործարարության համար:<br>4. Միջավայրի աղտոտվածության նվազում:<br>5. Փողոցներում էապես կբարձրանա երթևեկության անվտանգությունը: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | ***Նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները***<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռք բերման մրցույթի հայտարարում և պայմանագրի կնքում հաղթող ընկերության հետ<br>• Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում<br>• Շինարարության թույլտվության տրամադրում<br>• Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում<br>• Հեղինակային հսկողության ծառայությունների պայմանագրի կնքում<br>• Շինարարության ընթացքում շինարարական, ծառայությունների մատուցման աշխատանքների որակի և ծավալի մշտադիտարկում<br>• Աշխատանքի վերջնական արդյունքի ընդունում և վճարում |

**Իրականացվելիք աշխատանքների ծավալները**

**1. Քաջարան քաղաքի Շիրվանզադե փողոցի հիմնանորոգում - 91452,8 հազ դր.**

*1. Երթևեկելի մաս ՝*

*երթևեկելի մասի լայնացում*

*երկշերտ ասֆալտբետոնե ծածկի կառուցում 3449,2մ$^2$*

*2. Մայթերի վերակառուցում/ասֆալտապատում՝ 485,3մ$^2$,*

*Բազալտե եզրաքար 495,6 գծմ*

*Բետոնե եզրաշար 17,0 գծ.մ*

*3 Բետոնե հենապատերի տեղադրում 82մ*0,8մ*

*4. Մետաղական բազրիքների տեղադրում 198,5 մ*

*5. Բետոնե ջրահեռացման վաքի տեղադրում 95 գծմ*

*6. Դիտահորերի վերանորոգում 24 հատ*

**2. Քաջարան քաղաքի Չարենց փողոցի հիմնանորոգում - 52725,9 հազ դր**

*1. Երթևեկելի և բակային մասեր ՝*

*ասֆալտբետոնե ծածկի իրականացում 2966,3 մ$^2$*

*2. Մայթերի վերակառուցում ՝*

*ասֆալտապատում 87,8 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 111,6 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 88,4 գծմ*

*3. Սալվածքներ*

*ասֆալտապատում 457,5 մ$^2$*

*բետոնե եզրաշարի տեղադրում 44,6 գծմ*

*4. Հենապատերի հիմնանորոգում 157,6 մ$^2$*

*Բազալտե թասակների տեղադրում 112 գծմ*

*5. Դիտահորերի վերակառուցում 10 հատ*

**3. Քաջարան քաղաքի Շահումյան փողոցի հիմնանորոգում - 155972,2 հազ դր**

*1. Երթևեկելի և բակային մասեր ՝*

*ասֆալտբետոնե ծածկի իրականացում 8448,9 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 338,4 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 30,1 գծմ*

*2. Մայթերի վերակառուցում ՝*

*ասֆալտապատում 381,2 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 570 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 91,0 գծմ*

*3. Սալվածքներ*

*ասֆալտապատում 267,6 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 160,2 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 82,0 գծմ*

*4. Հենապատերի հիմնանորոգում 1782,7 մ$^2$*

*Բազալտե թասակների տեղադրում 555 գծմ*

*5. Դիտահորերի վերակառուցում 18 հատ*

**4. Քաջարան քաղաքի Բակունց փողոցի հիմնանորոգում - 67426,6,0 հազ. դր.**

*1. Երթևեկելի և բակային մասեր ՝*

*ասֆալտբետոնե ծածկի իրականացում 5226,5 մ$^2$*

*բազալտե եզրաքարերի տեղադրում 31,4 գծմ*

*2. Մայթերի վերակառուցում ՝*

*ասֆալտապատում 168,55 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 184,2 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 46,0 գծմ*

*3. Սալվածքներ*

*ասֆալտապատում 454,3 մ$^2$*

*բազալտե եզրզքարերի տեղադրում 231,2 գծմ*

*բետոնե եզրաշարի տեղադրում 34,0 գծմ*

*4. Հենապատերի հիմնանորոգում 425,8 մ$^2$*

*բազալտե թասակների տեղադրում 133,0 գծմ*

*5. Դիտահորերի վերակառուցում 7 հատ*

*6. Սիզամարգի վերականգնում 101,4 մ$^2$*

**5. Քաջարան քաղաքի Լեռնագործներ փողոցի հիմնանորոգում - 85522,1 հազ դր**

*1. Երթևեկելի և բակային հատվածներ*
*միաշերտ ասֆալտբետոնե ծածկի իրականացում 5461,2 մ$^2$*
*2. Մայթերի վերակառուցում՝*
*Ասֆալտապատում 147,0 մ$^2$*
*Բազալտե եզրաքարերի տեղադրում 144,7 գծմ*
*3. Սալվածքնրի հիմնանորոգում*
*ասֆալտապատում 338,9 գծմ*
*բազալտե եզրաքարերի տեղադրում 638,0 մ$^2$*
*4. Հենապատերի հիմնանորոգում 767,4 մ$^2$*
*Բազալտե թասակների տեղադրում 269,0 գծմ*
*5. Ջրահեռացման համակարգի կառուցում*
*ջրահեռացման վաքի կառուցում՝ 10,0գծմ*
*ջրհորի կառուցում*
*6. Դիտահորերի վերակառուցում 29 հատ*

**6. Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի, Գետափնյա - Լեռնագործներ անցուղու հիմնանորոգում 139633,9 հազ դր**

*1. Երթևեկելի մաս ՝*
*երկշերտ ասֆալտբետոնե ծածկի կառուցում 5739,3մ$^2$*
*միաշերտ ասֆալտբետոնե ծածկի կառուցում 3192,78 մ$^2$*
*2. Ջրահեռացման համակարգի կառուցում*
*Մետաղական ջրընդունիչներ՝ 11 և 9 գծ.մ*
*ջրնետ խողովակներ՝ 2*3 գծ.մ*
*դիտահորերի տեղադրում 22 հատ*
*3. Հենապատերի վերանորոգում 87,2 մ$^2$*

**7. Ճանապարհի հիմնանորոգում Քաջարանց գյուղում - 97041,4 հազ դր**

*1. Երթևեկելի մաս՝*
*ասֆալտբետոնե ծածկի կառուցում 4701,0 մ$^2$*
*իջատեղերի վերանորոգում և ասֆալտապատում 1158,2 մ$^2$*
*2. Կողնակների ամրացում 855,0 մ*
*3. Մետաղական արգելափակոցներ 472,0 գծմ*
*4. Ազդանշանային սյուների տեղադրում 21 հատ*
*5. Ջրահեռացման համակարգի կառուցում*
*6. Հենապատերի հիմնանորոգում 33,0 մ$^2$*
*7. Մայթերի եզրաքարեր 40,0 գծմ*

**8. Լեռնաձոր գյուղի 1-ին փողոցի հիմնանորոգում - 20171,0 հազ. դր.**

*1. Երթևեկելի մաս՝*
*հողային պաստառի վերականգնում 454,31 մ$^2$*
*ասֆալտբետոնե երկշերտ ծածկի կառուցում 1130,4 մ$^2$*
*2. Կողնակների ամրացում 153,87մ$^2$*
*3. Մետաղական արգելափակոցներ 16,0 գծմ*

**9. Լեռնաձոր գյուղի 2-րդ փողոցի հիմնանորոգում - 50525,0 հազ. դր.**

*1. Երթևեկելի մաս՝*
*Միաշերտ ասֆալտբետոնե ծածկի իրականացում 2333,0 մ$^2$*
*իջատեղերի վերանորոգում և ամրացում 135,2 մ$^2$*
*2. Կողնակների ամրացում 319,3մ$^2$*
*3. Մետաղական արգելափակոցներ 235,0 գծմ*
*4. Բետոնե միաձույլ վաքերի տեղադրում 404,0 մ$^2$*
*5. Բետոնե եզրաշարի կառուցում 235,0 գծմ*

**10. Մայթի կառուցում Լեռնաձոր գյուղում – 45864,0 հազ. դր.**

*1. Հողային աշխատանքներ*
*2. Բազալտե եզրաքարերի տեղդրում 1458,85 գծմ*
*3. Բետոնե եզրաշարի կառուցում 1234 գծմ*
*4. Ասֆալտապատում 3373,9 մ$^2$*

| | |
|---|---|
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | • **Համայնքի բնակավայրերի փողոցներր ու ներհամայնքային ճանապարհները համայնքային սեփականություն են**<br>• **Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են** |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | **1. Քաջարան քաղաքի Շիրվանզադե փողոցի վերակառուցում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները Շիրվանզադե փողոցի չորս բազմաբնակարան շենքերի 590 բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները (Գանձասար հյուրանոցը, հանրային սննդի կետ, քաղաքային զբոսայգին, Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, մարզահրապարակ), ինչպես նաև փողոցում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը:<br>**2. Քաջարան քաղաքի Չարենց փողոցի հիմնանորոգում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները Շիրվանզադե փողոցի 510 բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները (մանկապարտեզ, նոր կառուցված մարզահրապարակ),<br>**3. Քաջարան քաղաքի Շահումյան փողոցի հիմնանորոգում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները Շիրվանզադե փողոցի չորս բազմաբնակարան շենքերի 690 բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված ԶՊՄԿ արտադրական և վարչական նշանակության օբյեկտները, ինչպես նաև փողոցում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարողղ սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը:<br>**4. Քաջարան քաղաքի Բակունց փողոցի հիմնանորոգում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները քաղաքի բոլոր բնակիչներն են՝ բժշկական կենտրոն, մարզահրապարակ, հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիր այցելողները:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները (**բժշկական կենտրոն,** հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիր, համայնքային արարողատուն, մարզահրապարակ), ինչպես նաև փողոցում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը:<br>**5. Քաջարան քաղաքի Լեռնագործներ փողոցի հիմնանորոգում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները քաղաքի բոլոր բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները ( համայնքապետարան, երեք բանկեր, փոստ, մշակույթի պալատ, կոմունալ տնտեսության գրասենյակ), ինչպես նաև փողոցում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարողղ սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը:<br>**6. Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի, Գետափնյա - Լեռնագործներ անցուղու հիմնանորոգում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները քաղաքի բոլոր բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները (արվեստի դպրոց, մարզահամալիր, թիվ 2 միջնակարգ դպրոց, ԶՊՄԿ), ինչպես նաև փողոցում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարողղ սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը:<br>**8. Փողոցի հիմնանորոգում և մայթի կառուցում Լեռնաձոր գյուղում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները Լեռնաձոր գյուղի 350 բնակիչներն են: |

| | |
|---|---|
| | ➢ Ծրագրի շահառուներն են նաև գյուղում գործող մանկապարտեզը, հիմնական դպրոցը, համայնքային կենտրոնը:<br>➢ Ծրագրի շահառուներ են հանդիսանում նաև Հայաստան-Իրան մայրուղով երթևեկող վարորդները:<br>**9. Ճանապարհի հիմնանորոգում Քաջարանց գյուղում**<br>Ծրագրի անմիջական շահառուները Քաջարանց գյուղի 220 բնակիչներն են, գյուղում գործող անասնաֆերման:<br>Համայնքի բոլոր բնակիչները՝ որպես խմելաջրի մաքրման կայան տանող այլընտրանքային ճանապարհ:<br>**10. Փողոցների և մայթի հիմնանորոգում Լեռնաձոր գյուղում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուները Լեռնաձոր գյուղի 350 բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառուներն են նաև փողոցում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտները՝ գյուղի մանկապարտեզը, հիմնական դպրոցը, համայնքային կենտրոնը, արարողատունը:<br>➢ Փողոցները գտնվում են գյուղի կենտրոնական հատվածում, ամենաբանուկ փողոցներն են և այդ փողոցներից օգտվում են/երթևեկում են գյուղի բոլոր բնակիչները ու հյուրերը: |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղերը** | Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աշխատուժի քանակը կսահմանվի նախագծանախահաշվային փաստաթղթերով: |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | **Համայնքի 2019թ. բյուջեի կատարողականը (մլն. դրամ)** |

| | ***Պլանը*** | ***Փաստացին*** | ***Տոկոսը*** |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 912, 75 | 912, 80 | 100 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 548, 41 | 548, 73 | 100 |
| *- Սեփական եկամուտներ* | 381, 16 | 381, 48 | 100 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 364, 34 | 364, 06 | 100 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 954, 65 | 867, 85 | 91 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 483, 50 | 481, 42 | 99,5 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 471, 15 | 386, 42 | 82 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 471, 15 | 386 426 046 | 82 |
| *- ճանապարհաշինություն* | 231, 60 | 192, 92 | 83 |
| *- նախադպրոցական կրթություն* | 26, 02 | 24, 97 | 96 |
| *- փողոցային լուսավորություն* | 9, 36 | 9, 36 | 100 |
| *- կանաչապատ տարածքներ* | 1, 23 | 1, 23 | 100 |
| *-վարչական ապարատ* | 10, 28 | 10, 28 | 100 |
| *-արտադպրոցական դաստիարակություն* | 10, 60 | 10, 60 | 100 |
| *-բակային տարածքներ և խաղահրապարակներ* | 83, 18 | 38, 24 | 46 |
| *-վերելակների ձեռք բերում /10 հատ/* | 93, 17 | 93, 17 | 100 |
| *-բժշկական սարքավորումների ձեռք բերում* | 2, 56 | 2, 50 | 97 |
| *-այլ մեքենաներ և սարքավորումներ* | 3, 11 | 3 ,11 | 100 |

<table>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն</td><td>

***Ընթացիկ տարվա բյուջեի պլանը՝ 541 340 000 /հինգ հարյուր քառասունմեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար/ դրամ.***

<table>
<tr><td></td><td>Պլանը</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում<br>այդ թվում՝</td><td>541, 34</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>416, 34</td></tr>
<tr><td>- սեփական եկամուտներ</td><td>220, 88</td></tr>
<tr><td>- Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>125, 00</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,<br>որից՝</td><td></td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td>416, 34</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>125, 00</td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝</td><td>125 000 000</td></tr>
<tr><td>-ճանապարհաշինություն</td><td>25 000 000</td></tr>
<tr><td>- ջրամատակարարում</td><td>25 000 000</td></tr>
<tr><td>-բակային տարածքներ և խաղահրապարակներ</td><td>25 000 000</td></tr>
<tr><td>-բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում</td><td>50 000 000</td></tr>
</table>

</td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)</td><td>2020թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասում առկա է 125,0 մլն դրամ:<br><br>Նկատի ունենալով ՀՀ կառավարության՝ համայնքի սոցիալական ենթակառուցվածք-ների զարգացման ծրագրերում համաֆինանսավորում կատարելու պատրաստակամությունը, համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված և բարձր առաջնահերթությամբ ծրագրերը իրականացնելու համար համայնքի ֆոնդային բյուջեն կհամալրվի համայնքի պահուստային ֆոնդից</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր բյուջեն</td><td>806,234 մլն դրամ<br>Այդ թվում՝<br>- շինարարական օբյեկտների նախագծման աշխատանքների և նախագծերի փորձաքննության ծառայությունների ձեռք բերումը նվիրաբերության կարգով ֆինանսավորվել է մասնավոր հատվածի (ԶՊՄԿ ՓԲԸ և «Աժդանակ» ՍՊԸ) կողմից:<br>Այս գումարը ներառված չէ Ծրագրի ընդհանուր բյուջեի մեջ<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 13,64 մլն դրամ,<br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 3,77 մլն դրամ,</td></tr>
<tr><td>Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը</td><td>25,0 մլն դրամ (3,1%)</td></tr>
<tr><td>Այլ ներդրողներ</td><td>257,182 մլն դրամ (31,9%)</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>Սկիզբը՝ մայիս 2020թ. Տևողությունը՝ 7 ամիս</td></tr>
<tr><td>Ծրագրի ծախսերը</td><td>Նախագծանախահաշվային փաստաթղթերը կցվում են</td></tr>
<tr><td>Ամսաթիվ</td><td>22 ապրիլի 2020թ.</td></tr>
</table>

Համայնքի տնտեսական պատասխանատու Գ. Գաբրիելյան

Հեռ 094629499
Էլ. Փոստ garegin_eko@mail.ru

Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան